նուի Զարչարանաց սիւնին մէկ կտորը՝ որուն վրայ Յիսուսը կապեցին Կայիափայի տան մէջ, և զոր հաւատացեալք կը համբուրեն ի յիշատակ չարչարանաց Քրիստոսի։

Աւանդութիւն է թէ Քրիստոսի չարչարանաց և խաչելութեան ժամանակ այս մատրան տեղւոյն վրայ կը կենար Ս. Յովհաննէս Աւետարանիչը, երբեմն միայնակ և երբեմն ալ Ս. Կուսին հետ. և Քրիստոս խաչին վրայէն իր մօրը ըսաւ. «Կին դու՝ ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո» (Յովհ. ԺԹ. 26-27)։ Այս եկեղեցիին երկայնութիւնն է արևելքէն արևմուտք 11 ոտնաչափ, և լայնութիւնը՝ հիւսիսէն հարաւ՝ 28։

Ս. Յովհաննէս Աւետարանչի այս եկեղեցին կը յիշատակուի Սալահէտտինի կողմէ Հայոց տրուած հրովարտակին մէջ (Տե՛ս Սաւալանեանց Պատմ. Երուսաղեմի. Ա. Հար. էջ 410), որով եւ Խաչակրաց ժամանակ և ալ աւելի կանուխէն կը պատկանէր Հայոց։ Մեր այս կարծիքին ապացոյցը սա է որ Անաստաս վրդ. իր Ցուցակին մէջ կը յիշէ այս եկեղեցին, իբր վանք, «Ս. Յովհաննու վանքն ի դրանն Յարութեան» խօսքերով. երեք բառերով ալ կը հասկցնէ այն ոտնձգութիւնը, զոր Վրացիները նոյն թուականին սկսած էին կատարել հայկական սրբավայրերու մէջ։ Հաննէի պատմութեան համաձայն (էջ 216), 1631ին Գրիգոր Պարոնտէր պատրիարք մեծ նեղութեամբ և աշխատութեամբ և յատուկ հրովարտակով չինած է այս եկեղեցիին կամարները, և դարձեալ նոյն պատմիչը կը յարէ՝ թէ «Առաջի դրան սրբոյ եկեղեցւոյս՝ այլազգիքն այրեալ են զոմն վկայեալ վասն ի Քրիստոս հաւատոյն, և տակաւին երևի հետ ոտիցն որ տպեցաւ ի վերայ քարանց ի նշան հրաշից. ոմանք ասեն վասն Բագոսի որ թաղեցաւ ի Սիոն»։

Այս եկեղեցիին վերաբերութեամբ Հայք հետևեալ վէճը կ'ունենան Յունաց հետ. Յոյները կը ձեռնարկեն նորոգել իրենց Հայր Աբրահամու վանքը՝ որ նախագոյն Հապէշաց սեպհականութիւն էր և սահմանակից Ս. Յովհաննէս Աւետարանչի Հայոց եկեղեցիին։ Այս նորոգութեան ժամանակ կը քակեն Ս. Յովհաննէս Հայոց եկեղեցիին տանիքը և վերջնոյս քարերն ալ կը վերցնեն, իրենց տանիքին հաւասարցնելու համար զայն. վասն զի Ս. Յովհաննու տանիքը մէկ կանգունի չափ բարձր էր ուրիշներէն, և քնակաոն էր որ հաւասարած ժամանակ՝ եկեղեցիին առաստաղը